**Արձանագրություն 4**

**ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-18/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի**

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 25.04.2018թ. ժամը 15:00-ին:

Մասնակցում էին՝

***Հանձնաժողովի նախագահ***

**Մ. Սարգսյան** - ՀՀ ՖՆ գործերի կառավարման վարչության պետ

***Անդամներ***

**Է. Պողոսյան** -- ՀՀ ՖՆ ԳԿՎ սպասարկաման բաժնի պետ-վարչության պետի տեղակալ

**Ա. Մարտիրոսյան** – ՀՀ ՖՆ ԳԿՎ վարչատնտեսական բաժնի պետ

**Մ. Միքաելյան** - ՀՀ ՖՆ ԳԿՎ վարչատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ

**Ա. Գրիգորյան** – ՀՀ ՖՆ ԳԿՎ սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ

***Գնումները համակարգող***

**Ա. Աղաբաբյան** - ՀՀ ՖՆ ԳԿՎ գնումների գործընթացի կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ

## 1. Տեղեկություններ բանակցությունների վերաբերյալ

1. ՀՀ կառավարության 04.05.2017թ N526-Ն որոշման 40-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ 17-րդ, 23-րդ և 26-րդ չափաբաժինների մասով գների նվազեցման նպատակով հրավիրվել էր միաժամանակյա բանակցություններ «Սմարթլայն» ՍՊԸ-ի, «Արվատեկ» ՍՊԸ-ի և «ՎԱՆԵ» ՍՊԸ-ի հետ հետ 10 րոպե տևողությամբ սույն թվականի ապրիլի 25-ին ժամը 15:00-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում: Բանակցություններին վերոնշյալ կազմակերպությունները չեն ներկայացել:

   Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ – 0:

## 2. Տեղեկություններ հայտում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ

1. Ա/Ձ Սամվել Խուդավերդյան-ը հրավերով սահմանված ժամկետում (1 աշխատանքային օր) չի շտկել հայտում առկա անհամապատասխանությունները՝ չի ներկայացրել համապատասխան լիազորագիրը:
2. «ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ-ն հրավերով սահմանված ժամկետում (1 աշխատանքային օր) շտկել է հայտում առկա անհամապատասխանությունները:
3. «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն հրավերով սահմանված ժամկետում (1 աշխատանքային օր) շտկել է հայտում առկա անհամապատասխանությունները:

**Հանձնաժողովը որոշեց.**

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ ընթացակարգը հայտարարել 17-րդ, 23-րդ և 26-րդ չափաբաժինների մասով չկայացած:
2. Ա/Ձ Սամվել Խուդավերդյան-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:
3. «ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:
4. «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ – 0:

## 3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

«ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-18/20» ծածկագրով ընթացակարգի գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել հրավերի փաստաթղթերի ներկայացման և եզրակացության ներկայացման օրվանից հետո ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ – 0:

| | | |
|---|---|---|
| Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ | ______________ | Մ. Սարգսյան |
| հանձնաժողովի անդամներ՝ | ______________ | Է. Պողոսյան |
| | ______________ | Ա. Մարտիրոսյան |
| | ______________ | Մ. Միքաելյան |
| | ______________ | Ա. Գրիգորյան |
| Գնումները համակարգող ՝ | ______________ | Ա. Աղաբաբյան |